

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԺԱ

Մարտիրոս Բեռնարդեան Կ. Պոլսէն՝
առ Եղիազար Այնթապցի՝ ի Բերիա(*) :

Գերարդիի և պայծառ ջահիդ անիբայ,
գերագոյն և գերապատիւ շնորհալի աջիդ
գերակայ, գերահռչակ և գերազարդ յա-
ջորդ Արքայն Յակոբայ վիճակիս Հայկայ և
մաքրազլւարթ գարշապարիդ վեհակայ՝
Տեառն Եղիազարու աստուածորեալ հայ-
րապետի սրբոյ, երես զգետնով եզեալ և
ծունր առ ի խոնարհ զգետնի մածեալ, ի
բացեալ վայրէ իբր առաջի մեծութեանդ
արտասուողէմ և արտասուածոր աշօք
սրտի փղծանաց և հոգւոյս տապոյ կարօ-
տանաց անհուն տապնապիւ կարի խկ թալ-
կացեալս ի տես քոյննամեծ անձինդ, ես
ստորակ ծառայս քո, անուամբ և եթ էրէց
կոչեցեալս՝ Մարտիրոս յաւէտ սիրով վառ-
եալս տարփմամբ, և նարդեանս խաւարա-
մածս շիջեալ և անտեսացեալ ի պէս պէս
լլկանաց, ներքին և արտաքին կրից խղ-
խայթեալս և ի կսկծանաց զիպուածոց
բախտից եղանակիս ի ծերութիւնս թողեալ
յԱստուծոյ, մինչ զի մաշեալ և լուծեալ
ամենայնիւ, զի զոր ոչ յիշէ Աստուած՝ մեր-

(*) Եղիազար Այնթապցի մատուցած էր օսման-
եան գաւառները Էջմիածնի կաթողիկոսութենէն բաժնել
եւ կաթողիկոսանալով՝ Երուսաղէմի մէջ հակաբռն
հայրապետութիւն մը ստեղծել։ Ան իր այս խորհուրդը
1663ին Սուրբ Գլխաւորի մատուցած մէջ խոստովանաբար
կը յայտնէ Սիսի Խաչատուր կաթողիկոսին (Միսէէրնի),
ու կը համոզէ զայն որ Տայ իրեն կաթողիկոսական օ-
ծումը Բերիոյ մէջ, Տարի մը վերջ, 1664ին, իր այս
նպատակը իրագործելու համար Եղիազար կ'երթայ Բե-
րիա։ Երբ այս գաղտնի խորհուրդը կ'իմացուի Պոլսոյ
մէջ, խելահաս ազգայիններ, որոնց մէջ էր նաեւ Երե-
միա չէլէպի Բեռնարդեան, ժողով կը գումարեն ու կը
յորդորեն Խաչատուր կաթողիկոսը, որ Բիշ առաջ Պոլիս
հասած էր Երուսաղէմէն, չորսմարդել Եղիազարի տուած
իր խոստումը, ու անմիջապէս Երեմիա չէլէպիին կը գրկեն
Բերիա Եղիազարին մօտ, որ յորդորէ զայն ետ կենալ իր
այդ ճառագէտ ու վնասակար խորհուրդէն։ Այս առի-
թով Երեմիա չէլէպիին հայրը՝ Մարտիրոս Բեռնարդեան
կը գրէ Եղիազար Այնթապցիին իր որդւոյն
մասին այս յանձնարարական նամակը, որ նոյն ասեւ
շահեկան տեղեկութիւններ կը պարտեցնէ ժամանակին
անցեալուն վրայօք, նամակին խմբագրողը, ինչպէս ու-
նէն բացայայտ կ'երեւի, է նոյն ինքն Երեմիա չէլէպի
Բեռնարդեանը։

Ժին ի նմանէ ըստ Դաւթի, յոքն առաւել
և վասն քո հաշիւալս, զի անմխիթարս թո-
ղեր բնաւին, թէպէտ և դոյզն ինչ երեսե-
ցուցանես զնշոյս բնամած և անխորհրդիս
սիրոյն, զոր անդուստ կուտայ յոգեոջ մե-
րում անսպառապէս։ Բայց վասն պատահ-
մանց և կրիցդ առ մեզ իմացելոյ՝ առաւել
սուզիմ ի խորս և տառապիմ յանդունդս։
Զի ընդէ՞ր այդ քեզ մարթացաւ և ո՛րպէս
այդ յոքնիմաստիդ և կորովախոհիդ դէպ
եղև, եթէ քանի՞ տանջեալ մաշեալ զկեանս
քո անխնայարար։ Ահա՛ խեղճումն այսու
ամենայնիւ առաւել քան զքոյդ մաշէ, և
ի հոգի ցաւեցուցանէ։ Բայց արդ զի՞նչ ևս
շահեցիմ, զի խնդրեմ և ոչ հասանեմ, ու-
ղերսեմ և ոչ տեսանեմ, արապիմ և ոչ ինչ
օգտիմ, փութեմ և ոչ գտանեմ, ճեպիմ
և անսփոփ յամենայնէ զատարկացեալ մը-
նամ, և էսկի մէտէլովն Դաւթի զիս խաբել
կարծեմ՝ թէ ո՛վ տայր ինձ թեւ աղանոյ։
Իսկ ի սոյն մտաբերութեանն միտելոյ տե՛ս
աստանօր զտազնապիւն բաղմութիւն և
ալեացն ամբխումն, զհրոյն բորբոքումն
և զվշտին թանձրութիւնն, զտանջանակը-
րութեան խտութիւն և զախտին յոլո-
ւումն, յորժամ լըւայ՝ թէ եկեցես արդ։
Ի քեզ յանձնեմ զգաւատաստան։ Իմ գերե-
խայն կօմիկ ո՛րպէս թողում և զանառակ
Կեդրոյն որո՞յ յանձն առնեմ, զպակասա-
ւորն երկնեկ(†) ո՛րպէս յեսս ընկրկեմ, և որ
զայն՝ զայսն յաշաց կորուսանեմ, զի վրան
նոցին տառապիցաւ, որ պահէրն ի ջեր-
մութենէ և սայփանն ի ծրւէնս հերձաւ,
զի ծածկէր ի ցրտոյն, և անդառնալին ճա-
նապարհ յերկրեցաւ և ի հոգ լուծաւ՝ սը-
զալից զտունն արարեալ։ պակասեցան որ-
դիքն ի մօրէն և անտիրացան ի գորովոյ
ծնօղացն(†)։ Թողից զմանկունն պատճառ,
և թէ զու որ այսքան աշխատաւորս գոլով
մինչև ցայժմ ի բիրտ ազգէս զանկատա-
ւոր մնաս, ես մին էրէցս զի՞նչ շահիցիմ
ի չուզելոյս կամ թէ ի մեալոյս, եթէ ոչ՝
այսուհեաւ ափառեալն կենցաղոյս վճա-

(†) Ինչպէս այս տեղեկէն կ'երեւի՝ Տէր Մարտիրոս
Բեռնարդեան, Երեմիա չէլէպիին գաւ, ունէր նաեւ
երկու մանչ եւ մէկ աղջիկ գաւակներ։ Կօմիկ (ապա
Կոմիսա Բեռնարդեան) որ իմը տարեկան էր նամակս գըր-
ուած տարին, եւ Գեորգ եւ Երեմիկ։

(††) Ակնարկութիւն այդ տեղեկէն զեւ նոր վախ-
նանած իր երեխաներին։

բուժման է և յոփին(?) յաւիտենից սպասեցից և կոչողին ակնկալայց: Զի՞նչ շահեցաք մինչև ցայժմ հոգանաց, և որ ի չորրորդ ժամանակի ձմերուտն զի՞նչ յարգիցիմք, և թէ ոչ բաւական արժանիս տեսեալ լինիցի զմեզ կտոր մի կտաւոյ: Բայց հայցեմ ի բնամած զթոյ քո և յանդատին զորովոյդ, զի ի սուրբ և ի զերեկմանաց մաղթանաց առ Բարձրեալն մատուցես վասն մանուաց մերոց, որպէս զի զգաստացին յարբուսն հասակի ժամանել, զի և մեք սփոփութիւն ի նոցունց եեթ զայն առեալ, հոգացեալ պիտոյսնոցա: Յայնժամ պարտական եղէց հոգեով ի մահ և ի կեանս ի զրուսն քո ծառայութեան: Բայց աւտսիկ ի սոյն սէր տարփացեալ և քո սիրուդ ոչ ժուժեալ, փոխանակ իմ առաքելցի առ սրբութիւնդ զորդեակն իմ և զծառայ քո, զանդրանիկն իմ և զկրօնին քո, զպատանեակն իմ և զհոսկն քո, զանձնական իմ և զխնդրելին քո, զանձնածինն իմ և զհոգեծինն քո, զլոյս աշացի իմ և զսիրելին քո, ըզհոգւոյս հոգիդ իմ և զփարեւին քո, և և զորդիդ իսկ ըստ հոգւոյ, զոր սնուցեր հաւատով, զարգացուցեր յօստով, զարդարեցեր սիրով Աստուած Սուրբ Հոգւոյն և մարդացեալ ի ներքոյ ամենայն առաքելութեանց հոգւոյ և մարմնոյ ի լրումն կուտարնութեան բարեաց զործոց ճանաչելոյ աշխարհի՝ զգա: Եթէ ի քէն պատուաստեցաւ իմաստն, ի քէն վառեցաւ ճրագն հրուշակեալ, ի քէն շինեցաւ օսկէզօծ յարկն հանգստեան սրտի համբալ, ի քէն վաշիշացաւ զարդն ուշիմութեան, քանզի զոր արդ ընկալցիս ընծայս ի քեզ՝ զքոյս ի քոյոց մատուցեալ և որպէս վայել է քոյնամեծ զթութեան հայրութեանդ, այնպէս խնամեցես: Զի ահա էառ զշունչն իմ և ել ի ճանապարհ, խլեալ ի բաց զհոգի իմ և ընդ իւր տանի, կորզեալ զկենդանութիւն իմ և արար կիսամահ, քաղեալ զլոյս աշացս և պաշար զայն առնէ, զլոյս կենաց իմոց երարձ և ծածկոց զայն կամի, զուրախութիւն վերածեաց և զգեստ զայն ազանի: Արդ, ո՞վ Տէր իմ, աղաչեմ զքեզ՝ մի՛ սրտմտիլ բանիցս աղաւաղելոյ, զի յուրովեաց զցաւ իմ և բազմոյոց զտապ իմ, զի ո՞վ ոք կորոյս մեծութիւն և ոչ աշխարհաց, ո՞վ ոք զլորեցաւ և ոչ հեծեծեաց, ո՞վ ոք ի սիրելոյն մերժեցաւ և ոչ

եւաց ըստ նարեկացւոյն, և որ ի կարգին: Վերստին կողկողիմ, Տէ՛ր իմ, զի ոչ ունիմ ինչ ասել, այլ թէ զկեանս իմ ի քեզ յանձին և ասեմ ըստ Դաւթի: Աստուած, զա՛րձ, հայեա՛ց և տե՛ս, ոյց արա՛ աշգւոյս այսմիկ և զարման տա՛ր սմա, զոր տնկեաց աջ քո: Եւ այսու լոցից ի բազում մաղթելոյ, զի ահա յայտնեցան ի բազում սրտից խորհուրդք, և լացից անմխիթար, զի կտրեալ սառուցաւ երակունք զովացման սրտի իմոյ: Արդ՝ արագապէս հասցե՛ս մխիթարութիւն, փութապէս շիջուցես զտապ բոցոյ այրեցման լեարդիս, շտապով օռոգեցես զծարուս, վաղվաղակի հաստատեցես զտառապեալ անձինս ողւոյս, ճեպով կազդուրեցես զգալարեալ աղիս և աւետիս մատուցես՝ թէ ահա՛ փտեալ ձերունիդ նորոգեսցի, իբրեւ զարծուի արիասցի, ծայրացեալդ մատաղեսցի, խղիւսայթեալդ հաստատեցի, կոծեալդ սփոփեցի, ախտացեալդ բուժեցի, տրտմեալդ ցնծութեամբ զուարճացի: Բերկեա, Մարտիրո՛ս էրէց, զի ահա որդեակն քո և իմա Երեմիայս ժամանեալ եկն առ իսկհաս, բերելով զսէր քո առ իս՝ լցեալ խնդութեամբ և կայ ի պատուի իմում և ի փառս իմ ճեմեալ պճնի: Մի՛ հոգացես բնախն: Բա՛րձ զկապան, սրբեա՛ զարտօսր յաշաց քոց իսկովին և խնդութեամբ ծաղկեա՛ զկերպարանս քո ի մէջ բազմամբոխ ժողովոյդ, զի ասիցեն՝ թէ Տէր Աստուած իցէ ընդ նոսա:

Ո՞վ Տէր իմ, շնորհեա՛ զպարտիս իմ այսքան ըզձանացս արտաբերումն, և եթէ գտի շնորհս առաջի քո ծածկեալ խորհրդոյն, զոր արարեր ընդ Խաչատուր կաթուղիկոսին, որում փոքր ի շատէ տեղեկացաք, ցնծացաք ի յոգի և ուրախացաք ի մարմնի վասն խորհրդեանդ այդ ազգմամբ ըն Աստուծոյ և ոչ ի քէն: Ղերա հաւն Խութունձին(*) և լուկերքն կամին զքաղաքս ի ներքոյ ծանր լծոյ և պարտուց արկանել, և չունինք հոգարարձու, որ զքրիստոնեայքն հոգայ և զնոցա խիղճն ի միտածէ, բաց ի հրամանուցէդ: Եւ սաստիւ զիւր մի ուղարկես քաղաքիս այն քաղաքավարիչներուն, որ լուռ կենան: Եւ եթէ

(*) Յովնանէս Թիւրիսնի, որ եկիցս եղաւ պատրիարք Կ. Պոլսի՝ 1663-1664 եւ 1665-1667: Ծ, Հ,

հուն ասեա՝ նորա միտքն այս է, թէ մէկ մի ի մերայոց նստի, թո՛ղ քաղաքս աւելի. և զու լինաս պարտական. և զայլ մանր մասնաբար խաչատուր կաթուղիկոսն մի ըստ միօջէ բերանով պատմէ հրամանացոյ: Այլ խորհեա՛ և հոգս մեծ արա՛ զաթուղ, յոր կոչեցար՝ թէ որո՛վ հնարիւք հնացուցանես զշէնդ. ահա՛ մարդ չի մնաց, ո՛վ հոգայ և ցաւի, զի երթեալ զաղարեսցես ի տեղիդ իբրեւ ջահ ի վերայ աշտանակի, մխթարելով զեկեալս առ քեզ, որպէս սովորն ես: Այլ և ի վերայ այսց, ո՛վ Տէր իմ, և զայս լու՛ւր, զի ահա Յովսէփ վարդապետն ես այնպէս հարկաւոր բան չունի ի տեղս, որ քեզ օգուտ և տանս դործ արտացէ. արդ եթէ զգա առաքեացես յաշխարհն թրակայ կամ յիզմիւրոյ մինչ Ղալսէրի, կամ ի Լեհաց տուն, զի երթեալ նըւիրակեցէ, յոյժ բարւոք լինի. զի ահա տեսանեմք որ յաջողակ մարդ մի է և ձեռացն դործ յառաջ դալ: Ահա՛ այնքան փողոյ այլ թափեցար և սրացաւ նըւիրակ այլ չունիս և եղողքն մինչև ցայժմ բանի մի այլ չբերին ի պահամ (?). լինի թէ սա մէկ օգուտ և շահ մի անէ և լու ծառայութիւն մեծանձնութեանդ և սուրբ տանն: Ահա՛ ես ինքնին երաշխաւոր ամենայն պարկեշտութեան սորա. այս մինն թո՛ղ վասն իմ առաքեա և աղօթեցուք, միթէ Սատուած իւրն օգնական լիցի. և զով կամիս առաքեա ի Պուրսա, բայց թէ զներսէս և կալսկոպոսն առաքես, հետ քաղաքացոցն լու վարի: Ողջ լի՛ր աստուածային շնորհին ի պարծանս ամենայն հայաստանեայց:

Եւ արդ ի սոյն ոճ և յիզձ մեծու փափագանօք ամենայն բարեկամք ողջունիւ երկրպագութիւն մատուցանեն զարջապարիդ, ընկալցիս զգրեալս իմ, աղաչե՛մ: Եւ զմեզ հարցանեա՛ կամք ի մերձ Սարգիս վարդապետին(*), ոչ թէ վասն փառասիրութեան և կամ ի մարդկանէ փառս որսալոյ, սակայն ծածկագիտին յայտնի է, որ զինքն չահելու և կառավարելոյ յաղաղաւ. քան զի հրամանուցդ հարազատ որդի է, մանաւանդ օրինաց և կանոնաց ջատագով և վրէժխնդիր է. զի յորժամ սիրոյ և մխի-

թարանաց զիրդ ընթերցաւ, ի նոյն ժամայն ուխտիւ և երգմամբ խոստացաւ՝ թէ զոր ինչ էֆէնտու կամք և խորհուրդն է, այնպէս վարիմ: Վասն որոյ երես ի գեանի եղեալ թախանձանօք խնդրեմ ի Տեառնէդ, որ զմեր աղերսանքն անտես չառնես. երբեմն երբեմն եթէ յատուկ զրիւ և եթէ հասարակաց զինքն մխթարես, զսիրոյն օրհնութիւն և թշնամոյն սաստ, և պատիւ առցես, որ գնան զաղարին ի չարութենէն, զի այսքան արշաւել և ձեմել Արեւելցւոց բաւական է. այսուհետև չեմք կորեր տեղի. զմեր քաջածն ի նոցանէ Սատուր կաթուղիկոսէն տեղեկացիր: Թէպէտ քաղաքս անտէր և առանց հովիւ չի լինար, բայց զիմ կարճամիտ խելօքս և ապտալ դունովս՝ ի սորանէ ի դատ լու մարդ չի լինար, զիրա մեր խօլին խօլայ և մեղի կարի օժանդակ է, զի որպէս ի զրի իւրում արձանացուցեալ ես, մէկ մի լինայ, որ մինչև ի մահ տիրէ, զի մի՛ այլ և այլս փոփոխելով ի ներքոյ պարտուց անկանին: Եւ խնդրեմ զայս միտս ի սրբտէղ և ի խորհրդեանդ չի որոշես, որ քաղաքիս բազմամորթս ժողովուրդն զքեզ օրհնող և վասն կենաց քոց աղօթող լինին, և զու վորձս ի Գրիստոսէ ընկալցիս: — Թվին ՌՃԺԿ (= 1664) և սեպտեմբերի ԺԴ. օրն չորեքշաբաթի և յինն ժամուն, ի յԱպու Տաւութի քոյմ. հրամանուցդ սէլամու քէլամ կու մատուցանէ և հրամանուցդ հանապաղ զբարեկործութիւնդ կու պատմէ ի լսելիս ամենեցուն:

Հրատ.՝ Մ. Ե. Ն.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Երեկ կեղծիք արդարանալի բաւ մը չեկարին համար, սեղի անարդարանալի և զօրանին համար, որ սկարը խաբելով զայն իր կորուսին կ'առաջնորդի:

*

Նեկգաւոր մարդամանուկան շողովներուն անձնասուր ըլլալ՝ քոյն խմել և ոսկեղեն բաժակի:

*

Ձանցեք հաճոյանալ, բայց յիշեցեք թէ շոգոքորքելը խաբել է:

(*) Սարգիս Թէֆրեզադցի՝ եկիցն պատրիարք Կ. Պոլսի, 1664-1665 եւ 1667-1670: Ծ. 2.